ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք
Մելքոնյան փողոց 76, Հեռ.՝ 010-684929, 060-535553, Էլ. փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

04 դեկտեմբերի 2019 թ. թիվ 01/03/1693-19

«Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Խ. ԱԼՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ալմասյան.

Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի հունիսի 14-ին կնքված ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/18.2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր կազմակերպությունը մինչև 2019 թվականի հուլիսի 04-ը պետք է իրականացներ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուրի մանկապարտեզի ջրահեռացման համակարգի (կոյուղու) կառուցման աշխատանքները, ինչը սահմանված ժամկետում չի կատարվել: Այդ պատճառով էականորեն խախտվել են պայմանագրի կատարման ժամկետները, ինչպես նաև նոյեմբերի 30-ին ավարտվել է շինարարության թույլտվության ժամկետը:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայամանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, հիմք ընդունելով «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/18.2» ծածկագրով գնման պայմանագրի 3.1.4 կետի պահանջները՝ Ջրվեժի համայնքապետարանը 2019 թվականի դեկտեմբերի 4-ին միակողմանի լուծում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/18.2» ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ջրվեժի համայնքապետարանի գանձապետական «900105228069» հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 375,300 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Միաժամանակ հայտնում եմ, որ վերը նշված փոխանցումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում պայմանագրի կատարման ապահվման տուժանքի մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.3 կետի համաձայն համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը գանձելու նպատակով:

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Մարգարյան
հեռ.՝ (010)684929, 055-735553